

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ԵՂԻՉԷ Վ. ՊԱՊԻԿԵԱՆ

(1871-1947)



Տարույս նոյեմբեր 28-ի առաւօտը իր մահ-կանացուն կնքեց Մխիթարեան Ուխտիս երէց միաբաններէն Հ. Եղիշէ Վ. Պապիկեան իր 77 տարեկան հասակին:

Հանգուցեալը ծնած էր Տրապիզոն 1871-ի 5 Մայիսին, 1889-ին կը մտնէր վանք, 1894-ին մըը-տընջեմաւոր ուխտերով ինքզինքը կը կապէր անդամ Միաբանութեան եւ 1895-ին կ'ընդունէր քահանայական ձեռնադրութիւն Գերայ. Կիրեղեան Արքեպիսկոպոսի ձեռնադրութիւնը:

Հակառակ իր ուժեղ կազմին՝ տարիէ մը ի վեր սկսած էր կֆիլ 77 տարեկան ծանրութեան տակ եւ մահաւանդ սրտի անդոճ հիւանդութեան մը որ ստէպ վրան կը յարձակէր ծանր տագնապ պատճառելով:

Հանգուցեալը, գուրբ աստղի տակ ծնած մահկանացու, ինչպէս ամբողջ կեանքին մէջ ապրեցաւ ընկերական, ժպիտը երեսին մանկունակ նըկարագրով, նոյնպէս գուրբ ընդառաջ գնաց մահուան, ապրելով եւ երագելով ստէպ երկինքը՝ որուն կարօտը սրտին մէջ մեղմօրէն փակեց իր բիրբըր, բանալու համար գանձեց երանութեան լոյսերով ողորուն արդարներու հայրենիքին մէջ:

Հ. Ե. Վրդ. Պապիկեան մեծահասակ վանք մը տած էր. ու քէպէտ չի քողոր իր ետեւ ոչ գըրական անուն եւ ոչ նշանակելի գործեր, սակայն

կը նմանի համեստ զինուորի մը որ կամաւորներու խումբի մը հետ հաւատարմօրէն կը ծառայէ դրօշին՝ որուն առջեւ ուխտած է մինչեւ ի մահ ծառայել հայրենիքին: Արդարեւ նա հազիւ քահանայ ձեռնադրուած՝ իր մեծերէն կը սահմանուի գործնական կեանքի, աւաքելական ու կրթական պաշտօններով նուիրագործելու իր օրերը: Ու այսպէս մեծ գինքը կը տեսնենք Պապիկեանի մէջ նախ, ուր կը զբաղի տեղւոյն մէջ վարժարանի տղոց կրթութեամբ: Նոյն պաշտօնով զինքը կը գտնենք տարիներ վերջ Տրապիզոնի մեր վարժարանը եւ հուսկ Կ. Պոլիս եւ Մուրատ-Ռափայէլեան վարժարան՝ ուր կը վարէ մատակարարի պաշտօն: Պապիկեան գաւտ ան աշխատած է որպէս օգնական ժողովրդապետի նաեւ Նիկոմիդիոյ մէջ եւ այլուր, ինչպէս Միլան եւ Պուտարշտ:

Վերջին տարիները վանքի միայնաբանին մէջ իր սփոփանքը կը գտնէր աղօթքով ու խոկալով եւ մտերմութիւն մշակելով երկնաքաղաքի ներքին հետ:

Երկու տարի առաջ Զատիկին (14 Ապրիլ 1945) վանքի Ս. Զննոն ամբարանցին մէջ տօնեցինք իր քահանայական ձեռնադրութեան յիսնամեայ յոբելեանը:

Ու հիմա ան, քողած իր երկնաւոր պանդխտավայրը, կ'երթայ միանալու երկինքը անոնց հետ որ նուիրուեցան Մխիթարայ ուխտաւոր բանակին մէջ յանուն հայ ազգի բարոյական ու մտաւոր զարգացման ու կը վարձատրուին Անկէ որ միայն գիտէ գնահատել մեծ վաստակաւորներուն հետ նաեւ համեստ աշխատաւորները՝ ինչպիսին էր ողբ. Հ. Եղիշէ Վ. Պապիկեան, որուն հողակոյտին վրայ կը հսկեն անթառամ խունկն ու աղօթքները իր միաբան Հայրերուն:

Սգաւոր Միաբանութիւնս իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին եղբորորդի եւ Մուրատ-Ռափ. նախկին Սան ձրտ. Պետրոս Պապիկեանի՝ որ եղած է միշտ յարգող ու սիրող հանգուցեալին եւ որ փութացած էր իր սիրոյ վերջին տուրքը հատուցանելու քաղման ատեն յանուն նաեւ հետաւոր սիրելիներու եւ բարեկամներու, որոնց նոյնպէս կը մատուցանենք մեր ցաւակցութիւնը:

Հ. Ե. Վ.

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԳԵՌԳ. ՄԵՐԵԼԵԱՆ. — Ահանաւոր Հայեր Եզրպետի մէջ, Գահիրէ, 1947.

Թ. ՔԻՐԻՏԵԱՆ. — Զուգայեցի Խօջայ Նազար և իր զերդաստանը. (արտատպուած «Հայրենիք» ամսագրէն).

» — Նիւթեր հայ վաճառականութեան պատմութեան համար, հում մետաքսի վաճառականութիւնը և Հայերը (արտատպուած «Հայրենիք» ամսագրէն).

ԱՌ. ԱՀԱՐՈՆԵԱՆ. — Ժողովածու Երկերի. հտ. Ա. և Գ. Պոսթոն, 1946-1947.

ՎԱՐԴԱՆ ԳԵՌԳԵԱՆ. — Ծովուն երգը. Պուէնոս Այրէս, 1947.

ԵՒԳԵՆԷ ՇԱՀՆԱԶԱՐ. — Պաղտատի կարաւանը, Սթանպուլ, 1937.

Armenag Sakizlian. — Pages d'Art arménien, Paris, 1940.

Թ. ԱԶԱՏԵԱՆ. — Պատմութիւն Եսայեան վարժարանի (Յիսնամեայ յիշատակարան). Խաթանպուլ, 1945.

Ընդարձակ Տարեգիրք Ս. Փ. Ա. Հիւանդանոցի, Նոր շրջան ԻԿ. տարի. 1947. Խաթանպուլ, 1946.

ԳԿՏ. Ա. ԱՐԵՂԵԱՆ. — Դորպատի հայ Ուսանողութիւնը. Վիեննա, 1942.

» — Ուղղադրական բառարան (Գ. տպ.). Շտուտկարտ, 1947.

Dr. Artashes Abeghian. — Das armenische Volkespos ein Beitrag. Berlin, 1940.

» — Armenien 1940 (մատնասիպ).

ՍՈՒՐԷՆ ԳՐԱՏԵԱՆ. — Հայաստան (Հայեր, պատմութիւն, մշակոյթ, զբոսայգի, կենցաղ, նկարագիր), Շտուտկարտ, 1946.

ԳՐԻԳՈՐ Մ. ՍԻՆԵՒ. — Հայ երգ-Փոփ (հտ. Գ. և հտ. Գ.) 1947.

Խմբագրութիւնս իր ջերմագին շնորհակալութիւնը կը յայտնէ ԱԻԵՏԱԳԻՐ, ՀԱՅ ԿԵԴՐՈՆ, ՀԱՅՐԵՆԻՔ (Ամսագիր), ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, ՆՈՐ ԳԻՐ, ՊԱՊ-ՈՒԽՏԻ, ՍԻՈՆ, ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐ-ԶԱԳԱՆԳ, ԼԱՐԷՎԻՍԹԱ ԱՐՄԷՆԻԱ քերթերու խմբագրութեանց, որոնք հանած են զրկել մեր հաւաքածոյին պակաս քիւերը, գորս պատերազմի հետեւանքով չէինք կրցած ստանալ:

Դարձեալ կոչ կ'ընենք հոս միւս բոլոր հայ օրաքերթերու, ամսաքերթերու, տարեգիրքերու խմբագրութեանց՝ որ հանին իրենք եւս մեզի առաքելու խնդրուած պակաս քիւերը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԱԶՄԱՎԷՊ»

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՍԵՒԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ե. ՀԱՏՈՐ

ԳՈՐԳԸ ՀԱՅՈՑ ՄՕՏ

ԳՐԵՑ՝ Թ. ՔԻՐԻՏԵԱՆ

գինը տոլ. 3.—



“ Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի ”, 1947

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇՔԵՂԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ՆՈՒՐՈՒԱԾ « ԲԱԶՄԱՎԷՊ Ի ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ

Հոյակապ հրատարակութիւն մը՝ որ կը բովանդակէ գրական ու գեղարուեստական յօդուածներ հայ նշանաւոր գրողներէ, նկարներ՝ դասական, միջնադարեան ու արդի հայ նկարիչներէ, և գեղեցիկ նմոյշներ Ս. Ղազարու Զեռագրաց Մատենադարանէն ու Թանգարանէն:

Պանծալի ներկայացուցիչ մը հայ մամուլի՝ քաղաքակիրթ ու գրական աշխարհի առջեւ, և Թանկագին զարդ մը հայ գրասէր անհատներու գրասեղաններուն, ընտանիքներու, գահլիճներու:

ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

ԱՄԵՐԻԿԱ (ուղեծախսով միասին)	15.— տոլար
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ, ԵԳԻՊՏՈՍ և այլն	3.— սթերլին
ՖՐԱՆՍԱ	2500.— ֆրանք
ՍԻՐԻԱ, ԼԻԲԱՆԱՆ	25.— թուղթ
ԶՈՒՅՏԵՐԻԱ	40.— Զ. Ֆր.
ԻՏԱԼԻԱ	5000.— Լիրէթ

ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐՈՒՆ .

ԱՄԵՐԻԿԱ. Պր. Ենովք Լաչինեանին, 268 Northampton St. Boston 18, Mass.

ԼՈՆՏՐԱ. Պր. Արշակ Սաֆրասեանին, 18 Eton Villas, London N. W. 3.

ՓԱՐԻԶ. Պր. Բաբգէն Պոտոսեանին, 22 Rue Stendhal, Paris (20).

Կամ Սեւրի Մուրատեան վարժարանը, 26 Rue Troyon, Sèvres (S. et O.)

ՄԱՐՍԵԻԼԱ. Պր. Յովսէփ Ուլուհոճեան, 31, Rue St. Basile, Marseille (France).

ԳԱՀԻՐԷ. Պր. Յ. Գուլմուհեան C/o. Drog. Impériale 6, Av. Fouad Ier.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. Շիւցի Միլիթարեան վարժարանը, 18 Rue Station, Shutz, Alexandrie.

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ. Պր. Փանոս Էօրնէքեանին, C.nel Niceto Vega 5531.

ՍԻՐԻԱ և ԼԻԲԱՆԱՆ. Հ. Եսայի Գուլմուհեանին, Միլիթ. վարժարան, Հալէպ.

ՄԻԼԱՆ. Օր. Պերճուհի Պողոսեանին, Viale Porta Vercellina 1, Milano.